ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

—o—

ՀՐԱՒԷՐ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆԻՑ

—

Հայ գրողների Կովկասեան Ընկերութիւնը իր ընդհանուր ժողովներից մէկում (1912 դեկտեմբեր 2) որոշում կայացրեց դրամական դիմումներ չանել մասնաւոր անհատների, այդ տեսակի դիմումները վերապահելով պատեհ ժամանակին անելու Հայ ժողովրդի ընդհանրութեանը և ազգային-հասարակական հիմնարկութիւններին։

Եւ ահա այսօր այդ պատեհ օրը։

Այսօր, Հայոց գրերի գիւտի և տպագրութեան մեծ յոբելեանի օրը, Հայոց գրի ու գրքի լուսաւոր տօնին Գրողների Ընկերութեան վարչութիւնը, օգտուելով պետութիւնից իրեն տուած իրաւունքից (կան. 2. է) դիմում է ամենուրեք տարածուած Հայ ժողովրդի ընդհանրութեանը, դիմում է նրա ազգային այն բարձր գիտակցութեանը, որով նա սիրել է իր գրականութիւնը, արձագանգ տալ ամեն կողմից, յօժարակամ նուիրաբերութիւններով ուժեղացնել Հայոց գրական ֆոնդը և նրա միջոցով մայրենի գրականութիւնը, որ հանդիսանում է մեր ազգային ոգու հարազատ արտայայտութիւնը, մեր ինքնուրոյն գոյութեան պայծառ յոյսը, և կուլտուրական ազգերի շարքում կանգնելու մեր հզօր իրաւունքը։

Ընկերութիւնս հաւատում է, որ ամեն տեղ հայ ժողովուրդը սիրով պիտի ընդունի իր հրաւէրը և ամեն մի հայ մարդ իրՁ ազգային գրականութեան յաջողութիւնը պիտի համարի իր սեփական յաջողութիւնը և Գրական Ընկերութեան նպատակները նկատի այնքան բարձր, ինչքան բարձր կարող են լինել իրենց լայն իմաստներով գրականութիւնն ու գիտութիւնը ամեն աշխարհքում և ամեն մի ազգի մէջ։

Վարչ. նախ. Յովհ. Թումանեան
Անդ.-քարտ. Գ. ա. ք. Աղանեան

Սուրամից մեզ գրում են, որ տառերի գիւտի 1500-ամեայ և հայկական տպագրութեան 400-ամեայ յոբելեանների առթիւ այնտեղի ծխ. դպրոցի մանկավարժական խորհուրդը որոշել է մի գրական ցերեկոյթ կազմակերպել՝ աշակերտների համար և գրական երեկոյ պատշաճ դասախօսութեամբ՝ մեծերի համար։ Կը ներկայացնեն «Օսկան Պետրովիչը դժոխքումը» Սունդուկեանի պիէսը և երեկոյթի արդիւնքի մի մասը կը յատկացուի դպրոցական ֆոնդին։

—

Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկ. Վարչութիւնը իր ամսիս 9-ի նիստին որոշեց ամբողջ կազմով ներկայ լինել Թիֆլիսում կատարուելիք հայ տպագրութեան 400-ամեայ և տառերի գիւտի 1500-ամեայ յոբելեանական հանդէսներին։ Վարչութիւնը յանձնարարեց իր նախագահ պ. բժ. Ա. Զարգարեանցին Ընկ. կողմից շնորհաւորանք մատուցանել։

Վերոյիշեալ տօների առթիւ Ընկերութիւնը լոյս է ընծայում Ստ. Նազարեանի ժողովածուի Ա. հատորը, շքեղ հրատարակութեամբ, որը նուիրուած է տօների յիշատակին։

—

Մարիամեան Յովհաննեան օրիորդաց դպրոցի հոգաբարձական խորհուրդն իր վերջին նիստում՝ ամսիս 2-ին, որոշել է իր կազմից պատգամաւոր ուղարկել Էջմիածին հոգաբարձական խորհրդի անդամ պ. Գ. Տէր-Ստեփանեանին ազգային մեծ յոբելեանին մասնակցելու համար։

Նոյն դպրոցի Մանկավարժական մարմնի կողմից պատգամաւոր է ընտրուած դպրոցի տեսուչ պ. Ստ. Մալխասեանցը։

Նոյն դպրոցի հոգաբարձութեան և ուսուցչական մարմինների մէջ հանգանակուած է յօգուտ դպրոցական ֆոնդի մօտ 150 ռուբ.։